ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
Ա. Նավասարդյանի անվան հ. 196 հիմնական դպրոց
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան Դավթաշեն 4-րդ թաղ. Հեռ. 36-19-08

ք. Երևան,Դավիթաշեն 4-րդ թաղ.

« 12 » «01» 2015թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
ընթացակարգի գրանցված կազմակերպություններին

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Երևանի Ա. Նավասարդյանի անվան հ. 196 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր կազմակերպության միջև կնքված <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., «Երևանի Ա. Նավասարդյանի անվան հ. 196 հիմնական դպրոց » ՊՈԱԿ , մինչև 2015թ հունվարի 22-ը, ժամը 12.30: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն, ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., «Երևանի Ա. Նավասարդյանի անվան հ. 196 հիմնական դպրոց » ՊՈԱԿ -ի շենքում 2015թ. հունվարի 22 -ին ժամը 12.30-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի ծածկագիրն է՝ 196ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը ՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն, որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալները:

-Առդիր 14թերթ

Հարգանքով՝
<<Երևանի Աշոտ Նավասարդյանի անվան հ. 196 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ

տնօրեն՝ Ա. Նավասարդյան